Արձանագրություն թիվ 02

ՀՀ Արմավիրի մարզի Եղեգնուտի համայնքի ընդհանուր ժողովի նիստի
գ. Եղեգնուտ կայացած՝ 15.07.2011թ. ժամը 13^{00} – ին:

Նախագահությամբ՝ Ռ. Մարգարյանի
քարտուղարությամբ՝ Ս. Ալեքսանյանի

Ընդհանուր ժողովին մասնակցում էին համայնքի բնակչության 65 անդամներ:
Ներկա էր Արմավիրի մարզպետարանի ֆինանսական բաժնի պետ՝ Հ. Հարությունյանը, ավագանու անդամներ, Եղեգնուտի համայնքի ղեկավարի Աշխատակազմը:

Օրակարգում.- Եղեգնուտի համայնքի ղեկավարի կիսամյակային հաշվետվությունը կատարած աշխատանքների մասին:
Զեկ. Ռ. Մարգարյան (համայնքի ղեկավար)

Զեկուցողը մանրամասը ներկայացրեց կիսամյակում կատարած իր աշխատանքների մասին, մասնավորապես նշելով համայնքի 2011թ. համայնքային բյուջեի կիսամյակի արդյունքները, ինչպես մուտքային, այնպես էլ ծախսային մասով:
Այսպես՝ 01.01.2011թ. – 01.07.2011թ. ընկած ժամանակաշրջանում համայնքի բյուջե մուտքագրվել է 11808.3 հազ. դրամ, որը կազմում է 98.2%, իսկ ծախսային մասը կազմում է 19097.7 դրամ, որը կազմում է բյուջեով նախատեսված ծախսերի 88.3 % - ը:

Մուտքագրվել է՝

	պլան	փաստացի հազ. դրամ	կատ. %
1. հողի հարկ	400.0	291.5	72.9%
2. գույքահարկ իրավաբանական անձանցից	100.0	0.6	0.6%
3. գույքահարկ ֆիզիկական անձանցից	707.8	749.7	105.9%
4. հողի վարձավճար	200.0	165.2	82.6%
5. տեղական տուրքեր	12.0	2.5	20.8%
6. օրենքով և կատարողական ակտով		2.0	0
7. պաշտեսական բյուջեից տրվող դոտացիա	10596.8	10596.8	100%
Ընդամենը եկամուտներ	12016.6	11808.3	98.2% :

Վճարվել է.

1. աշխատավարձ	5388.4 հազ. դրամ
2. պարտադիր սոցիալական վճար	1107.7 հազ. դրամ
3. գրասենյակային և գրենական ապրանքներ	150.0 հազ. դրամ
4. օգն. սոց. անապ. ընտանիքներին	250.0 հազ. դրամ
5. վարչական սարքավորումներ	302.0 հազ. դրամ
6. կապի ծառայություններ	11.0 հազ. դրամ
7.էներգետիկ ծառայություններ	612.0 հազ. դրամ
8. ոչ նյութական հիմնական միջոց	30.0 հազ. դրամ
9. մշակույթային միջոցառումներ	200.0 հազ. դրամ
10. տեղեկատվական ծառայություններ	148.6 հազ. դրամ
11. համակարգչային ծառայություններ	85.0 հազ. դրամ
12. գույք դպրոցի համար	821.0 հազ. դրամ
13. խ/մ ջրի պոմպի և տրանսֆորմատորի վերանորոգում	920.0 հազ. դրամ

14. խմելու ջրի մանրէաբանական հետազոտում	72.0 հազ. դրամ
15. մանկապարտեզի շենքի վերանորոգում	9000.0 հազ. դրամ
Ընդամենը ծախսեր	19097.7 հազ. դրամ

Իր հարկային պարտավորությունները չի կատարում «Բետարդշին» ՍՊԸ – ն, որի գույքահարկը, հողի հարկը և վարձավճարը կազմում է 5180549 դրամ, որը ընդունել է «Բետարդշին» ՍՊԸ – ի սնակության գործով կառավարիչը և ընդգրկվել է պարտատերերի ցանկում:

Համայնքի 2011թ. կիսամյակի բյուջեի կատարողականը կազմել է 98.9%

Նշվեց նաև, որ համայնքում առկա են հետևյալ խնդիրները՝

1. . Մանկապարտեզի շենքի վերանորոգում:
2 Համայնքի ոռոգման ջրի բարելավում:
3. Համայնքի խմելաջրի վիճակի բարելավում և մեկ հատ նոր խորքային հորի հորատում:

Արտահատվեցին – Վ. Սիմոնյանը / Աշխատակազմի գլխ. մասնագետ/,
Է. Աբրահամյանը / ավագանի/, Վ. Մարգարյանը / ավագանի /,
Ե. Կարապետյանը / սեփականատեր /, Լ. Գևորգյանը / սեփականատեր/:

Ելնելով վերոգրյալից Եղեգնուտի համայնքի ընդհանուր ժողովը

ո ր ո շ ու մ է՝

1. Համայնքի ղեկավարի 2011թ. կիսամյակում կատարած աշխատանքները գնահատել բավարար:

2. Առաջարկել համայնքի ղեկավար՝ Ռ. Մարգարյանին և գլխ. մասնագետ՝ Վ. Սիմոնյանին՝
   ա) ապահովել իրավաբանական անձանց հարկային մուտքերը գույքահարկի և հողի վարձավճարների մասով, ըստ եռամսյակների 100% - ով:
   բ) ֆիզիկական անձանցից գանձումները հողի հարկի, վարձավճարների և գուքահարկի մասով, մինչև երրորդ եռամսյակի վերջը ապահովել 85% - ով:
   գ) բյուջեի կատարողականը տարեվերջը հասցնել մինչև 100 % և կատարել տարեկան պարտավորությունները:
   դ) ձեռնարկել համապատասխան ծրագրային միջոցներ, ներդրումների միջոցով ապահովելու համայնքի հետագա սոցիալ-տնտեսական զարգացումը:

Նախագահող՝ Ռ. Մարգարյան

Քարտուղար՝ Ս. Ալեքսանյան